

Դավիթ Ռ. Մոսիսյան

Փիլ. գիյ. թեկնածու

...Հայ ժողովուրդը չունի և չգիտե իր պատմությունը,
նույնիսկ երեկ մեկել օրվա պատմությունը.
չգիտի, թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում¹:

Հովհաննես Թումանյան

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Եվ գոհի բարդույթի հաղթահարման ուղիները*

Բանալի բառեր – պատերազմ, աշխարհաքաղաքականություն, առասպել, պատմականացում, գոհի բարդույթ, անգործություն, մազոխիզմ, հավաքական հիշողություն, հետհիշողություն:

Մուտք

Պատերազմը պայմանավորում է քաղաքական գործընթացները, ուղղորդում է տնտեսական գործունեությունը, կանգնեցնում է սոցիալական կյանքը, մաշում է հոգևոր խոյանքները, ուստիև դառնում է այնպիսի առաջնահերթություն, որը պահանջում է համապարփակ վերաբերմունք ու հետևողական կեցվածք:

Աշխարհի՝ հետզհետե «փոքրացմանը» զուգընթաց պատերազմները տեղայինից վերածվում են տարածաշրջանայինի և ձեռք են բերում աշխարհաքաղաքական լայն ընդգրկում: Բուն սահմանին տեղի ունեցող բախումները այլևս չեն վերաբերում միայն սահմանակից երկրներին, այլև անպայմանորեն ներգրավում են որոշակի աշխարհաքաղաքական միա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.06.2021:

¹ Թումանյան Հ., Հայոց պատմություն, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 6, Եր., 1994, էջ 355:

վորներ, կամ հակառակը՝ գերտերությունների ինչ-ինչ շահեր ծնում են տեղային պատերազմներ:

Ուստի սեփական պատերազմի մասին հոգ տանելը ենթադրում է քաղաքակրթական չափումների հասնող անդրադարձներ: Այստեղ իրավիճակը նույնն է, ինչ որ ազգային պատմություն ստեղծելու հավականությունը. ազգային պատմության գոյությունը ենթադրում է միևնույն դիրքից համաշխարհային պատմության առաջադրում: Համաբանորեն՝ պատերազմի սեփականումը, ասել է թե՛ աշխարհաքաղաքական հարաբերություններում ինքնիշխանության պահպանումը, ի թիվս այլ գործոնների, պահանջում է պատերազմի **պատմականացում**:

Պատմականացնել պատերազմը նշանակում է ձերբազատվել դրան առնչվող որոշակի վարք, իսկ ավելի հաճախ՝ կրավորականություն պարտադրող առասպելների ազդեցությունից և այն մտածել ժամանակի հոլովությամբ՝ ապագայի հեռանկարում ի մի բերելով անձնային, ռազմական, մշակութային, աշխարհաքաղաքական մակարդակները: Ասվածն առավել կարևոր է պատերազմում պարտված կողմի համար, քանի որ ձևավորվում է զոհի կարգավիճակ, որը չնկատվելու ու անտեսվելու պարագայում բարդությի վերածվելու հակում ունի: Ուստի **հետպատերազմյան շրջանը այդպիսին մնալու, խաղաղության չվերափոխվելու վտանգի առջև է, քանի դեռ չկա այն ներքնապես վերապրելու նախաձեռնություն:**

1. Պատերազմը աշխարհաքաղաքական նոր պայմաններում

Սկսած առնվազն քսաներորդ դարասկզբից՝ հասարակագիտական միտքը հետամուտ է որոշակի աշխարհակարգի որոնմանը կամ հաստատմանը: Աշխարհակարգ ասելով՝ սովորաբար նկատի են ունենում «մարդկային գործունեության այն կաղապարներն ու դասավորությունները, որոնք մարդկության՝ իբրև ամբողջության մեջ պահպանում են սոցիալական կյանքի տարրական կամ հիմնական նպատակները»²: Այդ գործընթացը բնականաբար տեղի է ունենում ի դեմս պետությունների, որոնցից ուժեղները որպես հեգեմոն փորձում են աշխարհակարգի նկատմամբ վերահսկողությունը ներկայացնել **իրենց պատկերացրած միջազգային հանրության տեսքով**:

Աշխարհաքաղաքական փոփոխություններին զուգահեռ փոխվում են ինչպես աշխարհակարգի բնութագրիչները, այնպես էլ միջազգային հանրության իրավասություններն ու սկզբունքները: Վերջին երեսուն տարիներ

² Bull H., The Anarchical Society. A Study of Order in World Politics. Third Edition. Palgrave, 2002, էջ 19:

րին աշխարհաքաղաքականության հիմնական առանցքը Սառը պատերազմի ավարտն էր, և ըստ այդմ՝ համաշխարհային գործընթացները դիտարկվում ու քննվում էին գերազանցապես այդ դիտանկյունից³: 1990-ականներին արևմտյան գրականությունն առաջադրում էր գլոբալացած և միաբևեռ աշխարհի կաղապարը: Սակայն շուտով այդ դիրքորոշումը մեթոդաբանորեն հնացավ մի շարք իրողությունների պատճառով, և նոր աշխարհակարգի պահանջ ձևավորվեց⁴: ԱՄՆ աշխարհակալական հավակնությունները զսպողի դերում հայտնվեց Խորհրդային Միությանը փոխարինող Ռուսաստանը, որն անգամ Ուկրաինան «կորցնելուց» հետո կարծես չի նահանջում իր ազդեցությունը հատկապես Հարավային Կովկասում և Միջին Արևելքում պահելու նկրտումներից և ինքն իրեն դիրքավորում է որպես միակողմ ուժը հավասարակշռող բևեռ: Շոշափելի են նաև Թուրքիայի նվաճողական քաղաքականության արդյունքներն ու հեռանկարները՝ պանթուրքական ու պանիսլամական ծրագրերը, որոնց գագաթնակետը դարձան Կիպրոսում և Սիրիայում իրականացվող ոտնձգությունները:

Աշխարհաքաղաքական այսպիսի իրավիճակում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմը, որում հայկական կողմը պարտվեց և Ադրբեյջանին հանձնեց Արցախին հարակից յոթ շրջանները, կորցրեց Շուշին, Հադրութն ու մի շարք այլ բնակավայրեր՝ չհստակեցնելով և որևէ կերպ չամրագրելով Արցախի կարգավիճակը և հավելյալ պարտավորություններ ստանձնելով մինչև անգամ ՀՀ ինքնիշխան տարածքում: **Ստեղծված պայմաններում Ռուսաստանին որպես դավադիր ու սադրիչ պետություն պատկերացնելը, պատերազմին Թուրքիայի ռազմաքաղաքական միջամտությունից բողոքելը և ԱՄՆ-ի հետ փրկության հույսեր կապելը խոր վերլուծության կարիք ունեն և դեռ տևական ժամանակ կզբաղեցնեն հայ քաղաքագիտական միտքը:** Եթե դրանց նայենք սեփական ազգային շահերի հայաստանակենտրոնության դիտանկյունից, պարզ կդառնա, որ մեզ համար դրանք խոչընդոտներ են ոչ միայն բուն պատերազմական գործողությունները լավագույնս կազմակերպելու, այլև հետահայաց քննությամբ պատերազմը սեփական պատմությանն առնչակցելու տեսանկյունից:

Այսպես՝ ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենի կողմից «ցեղասպանություն» բառի գործածումը համազգային խանդավառության առիթ է դարձել այն մտայնությամբ, որ շուտով պատմական արդարությունը կվերականգնվի: Մինչդեռ դա, ըստ էության, անվտանգության ապահովման առաջարկ է, որ բխում է որոշակի աշխարհաքաղաքական շահերից: ԱՄՆ արտաքին

³ Տե՛ս, օրինակ, **Fukuyama F.**, The End of History and the Last Man. London, Penguin Books, 1992. **Brzezinski Z.**, The Grand Chessboard. American Primacy and its Geostategic Imperatives. New York, Basic Books, 1997:

⁴ Տե՛ս **Köchler H.**, World Order: Vision and Reality. New Delhi, Manak, 2009, էջ 471-489:

քաղաքական որոշումները բացառապես մեր «շնորհքին» վերագրելը, իսկ հայ-ամերիկյան հարաբերությունները որպես միակողմանի «դրամաշնորհային» վերաբերմունք պատկերացնելը մեզ նույնպես հեռացնում են ինքնիշխան պատմություն ունենալու հնարավորությունից: Մյուս կողմից հայ-ադրբեջանական հակամարտության մեջ Թուրքիայի ներգրավվածության փաստի առթիվ ինքնանպատակ գանգատվելը նման է «աշխարհի վրա բարկանալուն»: Կարելի է ասել՝ հենց իր ձևակերպման օրից միջազգային իրավունքի չեզոքությունը միշտ էլ խնդրարկվել է⁵, ուստի այդ փաստը առավելագույնս հաշվի առնելը թույլ կտա մեր ուշադրությունը բևեռել պատերազմի վրա: Սակայն «ամենադրամատիկը», թերևս, Ռուսաստանի հետ հարաբերություններն են. քանի որ ամենամեծ ակնկալիքները հենց այս պետությունից են, ուստիև հակառակ տրամադրությունների ստեղծման հնարավորությունն ամենամեծն է: Դիվանագիտական առումով ամենատարօրինակն այն է, որ Ռուսաստանի՝ Հարավային Կովկասում հավակնությունների ամենասուր պահին Հայաստանում սկսեց ձևավորվել ռուսատյաց վերաբերմունք, այն էլ տևական ռուսամոլությունից հետո: Թեև Ռուսաստանն աշխարհի պատկերացումներում՝ ‘ամենաանհրապուրիչ’ երկրների թվում է⁶, այնուամենայնիվ, այն որոշակի ուժ է, որի ազդեցությունից դուրս գալը «նեղանալով» չի լինում, այլ ենթադրում է ոչ միայն ռազմական պատրաստվածություն, այլև նախևառաջ **ինքնության հաստատում հետզադուրապատիրական ձառաքանության միջոցով**: Սակայն «Խորհրդային անցյալի և/կամ Ռուսաստանի՝ որպես ուրիշի կառուցումն է, որ առայժմ վեր է հայ նտավորականության ուժերից»⁷, իսկ առանց դրա հնարավոր չէ որպես ինքնուրույն քաղաքական սուբյեկտ լիարժեք ու համակողմանի հարաբերություններ հաստատել նրա հետ:

Ժամանակակից պատերազմները սահմանի շուրջ ռազմական գործողություններից բացի տեղեկատվական գործողություններ են և դրանց հիման վրա՝ մշակութային կամ քաղաքակրթական ձևվածքներ: Թվում է, թե միջազգային իրավունքի սահմանած ինչ-որ օրենքներ, լինի՝ տարածքային ամբողջականությունը թե ազգերի ինքնորոշումը, պիտի կարգավորեին պետությունների փոխհարաբերությունները և սահմանների անխախտությունը: Սակայն մի կողմից արդի միջազգային հարաբերություններում զուտ ազգային պետություններով գործառելը մեթոդաբանորեն դժվարություններ է առաջացնում մի շարք միջազգային կառույցների առկայության

⁵ Sté Ferro L., Verlinden N., Neutrality During Armed Conflicts: A Coherent Approach to Third-State Support for Warring Parties, “Chinese Journal of International Law”, Vol. 17, N 1, March 2018, էջ 15-16:

⁶ Стé Колосов В. А., Зотова М. В., Геополитическое видение мира российскими гражданами: почему Россия не Европа?, «Полит. Политические исследования», N 5 (131), 2012, էջ 180-181:

⁷ Քայադյան Հ., Երևակայելով անցյալը. խորհրդային արդիականության պատումներ: Եր., Հեղինակային հրատ., 2020, էջ 263:

պատճառով⁸, մյուս կողմից սահմանները գծվում են ոչ այնքան դրսից՝ չոր իրավունքի դիրքերից, որքան ներսից մշակույթի ու քաղաքականության ուժով:

Գերմանական աշխարհաքաղաքականության հիմնադիրներից մեկի՝ Կարլ Հաուսհոֆերի դիտարկմամբ՝ սահմանը կարծես թե քարտեզին նշվում է մաթեմատիկական բանաձևերով դուրս բերված թվերով և խիստ ճշգրիտ է, սակայն «այդպիսի սահման, դրա հստակ դրսևորում ոչ մի տեղ և երբեք չենք գտնի իրական կյանքում»⁹: Սահմանը, ինչի ականատեսն էլ լինում ենք այսօր, գործնականում պայմանավորվում է առկա ներունակությամբ, ընդ որում՝ ոչ միայն ռազմական ու քաղաքական, այլև սոցիալ-մշակութային: Կամ այլ կերպ՝ մշակութային ուժի և տնտեսության հնարավորությունների իրագործումն է դառնում սահմանի հաստատման վճռական գործոնը¹⁰: Այս իմաստով հիմա, առավել քան երբևէ, պատերազմը հոգեբանական ու սոցիոմշակութային իրողություն է և հետևաբար պահանջում է համապատասխան պատրաստվածություն: Ինչպես որ անկախությունը նախևառաջ ներքին զգացում ու կամարտահայտություն է, և ապա նոր միայն քաղաքական ազդեցություններից ձերբազատում, նույնկերպ էլ **պատերազմում հաղթանակի գրավականը ներսից դուրս ծավալվող մշակութային սլացքն է: Համաշխարհային մշակույթ ստեղծած ժողովուրդները չեն պարտվում պատերազմում, կամ առնվազն՝ նրանց զցած խոր արմատները նորից վերածնվելու հրամայական են պարտադրում: Ուստի պատերազմի առանցքում թշնամու պարզունակ կերպարը դնելը ազգին ներքնապես խոցելի է դարձնում, քանի որ թշնամիները կարող են անվերջ բազմանալ ու շատանալ: Հանուն սեփական մշակույթի և վերջինիս ուղղորդմամբ մղվող պատերազմն է հաղթանակի ուղին:**

2. Պատերազմի պատմականացում և ինքնիշխանություն

Պատերազմը վերափոխման, հոգեվերանորոգման, մշակութայնացման մարտահրավեր է, որին արձագանքելու լավագույն ձևը պատերազմի պատմականացումն է: Եթե պատերազմող երկիրը ամբողջապես չի դրսևորել իր ներունակությունը և չի կայացել իբրև քաղաքակրթական միավոր, ապա հետպատերազմյան աշխատանքը հենց այդօրինակ հնարավորությունն իրացնելու մղիչ ուժ է: Պատասխանել այն հարցերին, թե ինչու և ինչի

⁸ Տե՛ս Бек В., Живя в мировом обществе риска и считаясь с ним. Космополитический поворот, Полис. «Политические исследования», N 5 (131), 2012, էջ 45-46:

⁹ Хаусхофер К., О геополитике. М., Мысль, 2001, էջ 33:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

հույությունն ու համերաշխությունը¹²: Թերևս չափազանց րած չենք լինի, եթե պնդենք, որ ավելի կարևոր է այդ սպասումների, վախերի, հիասթափությունների, հուսալքությունների, նպատակադրումների և ընդհանրապես հոգեկանում տեղի ունեցող գործընթացների գեներացումն ու պատմականացումը, քան ռազմական գործողությունների ժամանակագրումը. քանի որ պատերազմի ու հետպատերազմի փորձընկալման ներկայացումը հնարավորություն կտա բացահայտելու պատերազմի բնույթը, բայց պատերազմական իրադարձությունների ճշգրիտ նկարագրությունն անգամ ի գորու չէ վեր հանել պատերազմի ներքին կողմը: Պատմական իրականությունում չկան ճշմարտություններ, այնտեղ միայն փաստեր են¹³, և այդ փաստերը **հոգեկանի փաստեր** են, ուստիև անկասելի են, եթե մենք՝ որպես պատմական սուբյեկտներ, կազմաքանդենք պատմության հոլովությունը շրջող կարծրատիպերն ու անգիտակցաբար ստեղծված առասպելները:

Հայոց պատմության մեջ թևածող հիմնական կարծրատիպերից մեկը «բարոյական հաղթանակի» սկզբունքն է: Սա փաստական վիճակի արձանագրում չէ և մեծ հաշվով կարող է առնչվել պատմական ցանկացած դրվագի: Այս սկզբունքի հիմքում ոչ բացահայտորեն առկա է մյուսներից վեր լինելու կամ բարբարոսների համեմատ քաղաքակիրթ լինելու հավատամքը: Սակայն դրա հիմնավորումը ևս վիճարկելի է: Ավելին, միջազգային իրավունքի տեսությունը հաճախ քննադատում է օրենքներում ամրագրված «քաղաքակիրթ ազգեր» (civilized nations) եզրույթը՝ փաստարկելով, որ դա չունի նշանակություն¹⁴:

Արցախյան այս պատերազմի ընթացքում թերևս պարտության ծանրության պատճառով այս սկզբունքը չկիրառվեց, բայց այնուամենայնիվ շրջանառվում էին որոշ առասպելներ, որոնց վերհանումը կարող է պատմականացման սկիզբը լինել: Առաջին և գլխավորներից մեկը «հայերի անպարտելիության» առասպելն էր, որի գոյության հիմնական հենարանը Արցախյան առաջին պատերազմի ձեռքբերումներն էին: Դա սնվում էր բոլորից, տվյալ դեպքում թուրքերից ու ադրբեջանցիներից բարձր կանգնած լինելու մտայնությամբ: Հատկանշական է, որ նույնիսկ աղետալի պարտությունից հետո Ռուսինիայի հավաքականի նկատմամբ տարած ֆուտբոլային հաղթանակը դարձյալ «անհաղթ հայի» կերպարի շրջանառման առիթ տվեց: **Կարևոր նվաճում կլինի «հայերի անպարտելիության» մտածելակերպի հետագծի վերհանումը, հակառակ դեպքում կշարունակի սնուցվել հակադիր առասպելը, որ սկսեց ձևավորվել պարտությունից հետո,**

¹² Տե՛ս **Սկրոտյան Ա.**, «Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» հայեցակարգը որպես հետխորհրդային հայ հասարակական կյանքի սոցիոլոգիական ախտորոշման մոդել. Հայաստան, 2018. Իրողություններ և հեռանկարներ: Ինքնություն 3 (1), Եր., «Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն», 2019, էջ 56:

¹³ Տե՛ս **Spengler O.**, նշվ. աշխ., էջ 456:

¹⁴ Տե՛ս **Yee S.**, Towards an International Law of Co-Progressiveness, part II. Leiden, Boston, 2014, էջ 24-25:

այն է՝ որ հայերն ամենաանարժան ժողովուրդն են: Պատմականացումն այս իմաստով նշանակում է անգիտակցական փաստերը գիտակցական դարձնել: Իսկ քանի որ առասպելները հիմնականում անգիտակցականում ձևավորվող իրողություններ են, հասարակական կյանքում դրանց ձախողումը հղի է հակառակ ազդեցություն ունենալու վտանգով: Այստեղ է, որ հասարակության յուրաքանչյուր անդամի մասնակցությունը պատերազմին խիստ կարևորվում է. անշուշտ, հանրայնորեն այդ մտայնությունը ձևավորելն է ակտուալը, ոչ թե կանոնավոր բանակին՝ ‘պաթետիկ ոճով’ ուտելիք ուղարկելը:

Իհարկե, պատերազմական վիճակը ենթադրում է նաև ինչ-որ առասպելների կամ սկզբունքների գիտակցված առաջադրում, որոնք կապահովեն հանրության ինքնության զգացումը և հավաքականության ընկալման հնարավորություն կստեղծեն: Մեկ դարից ավելի այդօրինակ սկզբունքը մեզանում եղել է որպես ազգային գաղափարախոսություն ներկայացվող ազգայնությունը, ինչի ականատեսը եղանք նաև այս պատերազմի օրերին: Սակայն այստեղ մի խնդիր կա, որ կարոտ է հետազոտման ու վերլուծման. բանն այն է, որ այսօր շրջանառվող ազգային գաղափարախոսությունը, ըստ էության, նժդեհականությունից այն կողմ չի անցնում, որը ձևակերպվել է շուրջ հարյուր տարի առաջ՝ այլ պայմաններում:

Ընդհանրապես հայկական միջավայրում անցյալ դարի քսանականներին, վաթսունականներին և իննսունականներին ազգային միտքը զարթոնք է ապրել, որը մինչև այժմ դրսևորվում է հատկապես ռազմաքաղաքական սրացումների ժամանակ: Բայց դեռևս բաց է այն հարցը, թե ինչ ընդհանրություններ ունեն այդ արդեն իսկ տարամիտված «ազգային գաղափարախոսությունները», ինչպես է փոխվել դրանց հռետորաբանությունը, արդյոք դրանք շարունակում են իրար, թե առանձին իրողություններ են, և վերջապես՝ ինչպիսի փոխակերպումներ են անհրաժեշտ այսօր մեզանում ազգայնության սկզբունքի շարունակական գոյության համար: Օրինակ՝ ժամանակին ազգայնությունը միտված է եղել արևելահայ-արևմտահայ հատվածականության խնդրի լուծմանն ու իմաստավորմանը, որը հետագայում վերածվեց Հայաստան-Սփյուռք փոխհարաբերության խնդրի, և մինչև այժմ լայն քննարկումների տեղիք է տալիս: Մեր օրերում, կարելի է ասել, նույնքան հրատապ խնդիր է դարձել հայաստանցի-արցախցի բաժանումը, եթե չխոսենք «սևերի ու սպիտակների» թշնամությունից, որին անդրադարձը, անշուշտ, ազգային նոր «լեզու» է պահանջում: Առավել ևս, որ Արցախը դիտարկվել ու ընկալվել է որպես Հայաստանի Հանրապետության արժեքային հիմք: Ուրեմն ինչպիսի՞ն պիտի լինի մեր ազգային կեցվածքը ներկա «խեղաթյուրված» Արցախի հանդեպ:

Ուրվագծված իրականությունը իրադարձությունների ամբողջական պատկերը չէ, բայց նույնքան, եթե ոչ ավել, պատմականացման կարիք ունի: Ավելին, բուն իրադարձությունների պատմականացումը ոչ միայն բավարար լույս չի սփռում ոչ իրադարձային իրականության վրա, այլև հաճախ դա հնարավոր էլ չէ՝ ինքնիշխանության ոչ բավարար աստիճանի պատճառով: Վերջին պատերազմին վերաբերող վիճարկելի հարցերից մեկն այն է, թե ինչո՞ւ ավելի շուտ չկնքվեց հրադադարի պայմանագիրը, կամ թե ինչո՞ւ ադրբեջանական զորքը չգրավեց ամբողջ Լեռնային Ղարաբաղը. այս և նման հարցերի պատասխանը ստանալու համար թերևս հարկավոր է գնալ Մոսկվա¹⁵: Այս փաստերը կարծես ինչ-որ իմաստով մեզ զրկում են ինքներս մեզ ենթարկվելու ուղուց: Իսկ ինքնիշխանությունը չի կարող միայն ներս ուղղված լինել, ինչպես որ օրենքը, որ միշտ իրենից դուրս է¹⁶: Ինքնիշխանությունը թե՛ մտավոր, թե՛ քաղաքական առումով հնարավոր է, եթե սահմանվում է. չէ՞ որ սահմանումը ենթադրում է դրսի և ներսի բոլոր ազդեցությունների եզրերի ուրվագծում: Այնպես, ինչպես հեղհեղուկ է քաղաքական սահմանը, եթե չկա գիտելիք սահմանից անդին գտնվողի մասին, նույնկերպ անհիմն է սեփական պատմությունը, եթե այն չի առնչակցվում դրսի՝ **Ուրիշի պատմությանը**: Առավել խիստ՝ «պետության՝ ներս ուղղված ինքնիշխանությունն այն պնդումն է, որ իր սահմաններում (որոնք հետևաբար պետք է հստակ սահմանվեն ու վավերականացվեն միջպետական համակարգի շրջանակներում) պետությունը կարող է առաջ մղել բանական համարվող ամեն քաղաքականություն, ընդունել անհրաժեշտ համարվող ամեն օրենք... Պետության դուրս ուղղված ինքնիշխանությունն այն փաստարկն է, որ համակարգում առկա ոչ մի այլ պետություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրավունք չունի որևէ լիազորություն իրականացնելու տվյալ պետության սահմաններում»¹⁷: **Ուրեմն ինքնիշխանությունը ենթադրում է փոխադարձություն, որը, սակայն, դատարկ տեղում չի ձևակերպվում, այլ բխում է գորությունից: Եվ եթե չունես համապատասխան ռազմաքաղաքական ուժ, ինքնիշխանություն ձեռք բերելու ու պահելու ուղին դառնում է ուրիշի մասին անփոխարինելի գիտելիքը:**

¹⁵ Տե՛ս Ուրդան Ո., Վիթին Բ., Հայաստան. Լեռնային Ղարաբաղի անկումը, «Ակտուալ արվեստ», N 8 (14), 2021, էջ 49:

¹⁶ Տե՛ս Ազամբեյ Ջ., Homo Sacer: Գերիշխան տիրակալությունը եւ մերկ կեանքը, թարգմ.՝ Սարկ Նշաննահի, Եր., «Ինքնագիր» գրական ակումբ, 2020, էջ 31:

¹⁷ Wallerstein E., The End of the World as We Know It. University of Minnesota Press, 1999, էջ 60:

3. Պարտության փիլիսոփայությունը և գոհի բարդույթը

Պատերազմում պարտության պարագայում կենսական միջավայրի պատմականացումն ու դրանով իսկ ինքնիշխանության ձգտումն առավել կարևոր են, քան հաղթանակի դեպքում: Քանզի եթե վերջինիս դեպքում բաց է թողնվում քայլ առաջ անելու հնարավորություն, ապա առաջինի դեպքում անվերադարձ կերպով անդունդում հայտնվելու վտանգ կա: Ընդ որում, դա վերաբերում է հանրության բոլոր անդամներին, քանի որ թեև պատերազմի դաշտում միմյանց դեմ կռվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ժողովուրդները: Եվ դարձյալ՝ պարտության ժամանակ մարտադաշտից հասարակություն եկող հետևանքներն առավել խորն ու տևական են, որովհետև «անխուսափելի պարտութեան սարսափով խելագար բռնակալութիւնը իր սուլեգնութեան հետ կրկնապատկում է ժողովուրդի չարչարանքները»¹⁸:

Բայց նախ՝ ի՞նչ է նշանակում պարտություն, ե՞րբ կարելի է խոսել պարտության մասին: Համապատասխան իրավաքաղաքական գրականության մեջ կարող ենք գտնել տարբեր սահմանումներ ու ձևակերպումներ, որոնք պատվում են կապիտուլյացիայի գաղափարի շուրջ, ինչը ընդհանուր առմամբ ենթադրում է հաղթող կողմի պայմաններով ռազմական գործողությունների դադարեցում: Մի կողմ թողնելով այն, որ այստեղ իրավական հարթակում եզրույթների բացորոշման ու ճշգրտման հարցեր կան՝ նշենք, որ դա իրողության մակերեսն է, դրսևորումը, մինչդեռ կա հարցի ներքին հատույթը. հոգեկան դաշտում ե՞րբ և ինչպե՞ս է ամրագրվում պարտությունը, դա չգիտակցված որոշում է, թե՞ առավել գորեղ ուժի առջև կործանում, ինչպիսի՞ն է դրա ազդեցությունը պարտվողի վրա: Կարո՞ղ է, օրինակ, լինել որոշում, որ «ինչ էլ լինի, մենք մեզ պարտված չհամարենք»: Թե՞ գուցե պարտությունը սկսվում է հենց այդօրինակ որոշումից կամ դրանից առաջ: Հաղթական տրամադրվածությունն ունի կատարողական բնույթ («հաղթելու ենք»), այսինքն՝ սխալից ու ճշմարտությունից անդին է և միտված է դեպի ապագան: Պարտության մերժումը չունի ապագայամետ ուղղվածություն և հետևաբար ոչ էլ կատարողականություն է բովանդակում, ուստի այդ վճիռը միայն իրականությունից փսիխոտիկ շեղումով է գործում:

44-օրյա պատերազմը ըստ էության սկսվեց հենց այդօրինակ հայտարարությամբ, ինչն արդեն իսկ պարտության վկայություն էր: Խոսքը ոչ թե դավադրությունների, այլ հոգեբանորեն սեփական հավաքական կերպարի ուրվագծման մասին է: Պատերազմող ոգին անհատական տրամադրությունների ամբողջությունը չէ, այլ առկա է մի ընդհանուր միջավայր, որը որոշակի

¹⁸ Սժնեհ Գ., Հատընտիր: Եր., «Ամարաս», 2006, էջ 118:

դրոշմ է պարտադրում անհատներին: Անկախ անձնային որակներից՝ պարտության ուրվականը հետք է թողնում կենսամիջավայրում: Պարտվողի, զոհի կարգավիճակը մեզանում փոքր-ինչ սրբագրվել էր Արցախյան առաջին պատերազմի շնորհիվ:

Սակայն քանի որ դա չէր փոխակերպվել սոցիոմշակույթի, չէր ձևակերպվել ու ամրագրվել գրական-մշակութային տարածքում, հեշտությամբ կորսվեց՝ տեղի տալով առավել խորքային հիմքեր ունեցող զոհի կերպարին: Պարտության ախտանիշները երկդիմի են. դրանք դրսևորվում են կամ կանխավ պարտվողական կեցվածքով, կամ էլ հակառակը՝ պաթոսի գեներացմամբ՝ աշխարհին տիրելու կոչերով, «գոռոբագոռով», համատարած հերոսի կոչումներ շնորհելով և այլն: Հերոսը կամային որակների բյուրեղացում է, որ վեր է պետական կամ իշխանական որոշումներից: Հաճախ մարտական ոգին բարձրացնելու համար այդ կոչման շնորհումը ինչ-որ իմաստով նվազեցնում է դրա արժեքը, քանի որ կախման մեջ է դնում իշխանական այրերի կամեցողությունից: Չէ՞ որ անհեթեթություն կլինի որևէ մեկին հանձարի կամ սրբի կոչման շնորհումը, իսկ հանձարն ու սուրբը համապատասխանաբար մտքի և զգացմունքի ոլորտում համահավասար են հերոսին:

Առաջին պատերազմից հետո Ադրբեջանը խնդիր էր դրել գերծ մնալ հանրության մեջ պարտվողի կերպարի արմատակալման գործընթացի խորացումից: Նախ՝ իր ռազմավարության կենտրոնական դրույթներից մեկը դարձրել էր այն, որ Հայաստանը հաղթել է ընդամենը ձակատամարտը, իսկ վճռորոշ պատերազմը դեռ առջևում է: Հաջողել էր միջազգային հանրության աչքին Հայաստանը ներկայացնել իբրև ագրեսոր պետություն և փաստարկել, որ նրա իբր զավթողական քաղաքականությունը հեռանկար չունի, ուստի ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին: Այս դիրքերից նա հեշտությամբ ընդունեց հաղթողի կերպարը:

Հայերիս պարագայում կարծես անընդհատ վերադարձ կա զոհի կարգավիճակին: Դրա պատճառը գուցե այն է, որ չէ՞նք հաղթահարել այդ բարդույթը: Պատերազմի սկսվելուց մեկ շաբաթ անց շրջանառվեց մի պատում (նարատիվ), թե ադրբեջանցիների նպատակը նոր ցեղասպանության իրագործումն է: Հայտնի է, որ պատումը հանգեցնելի չէ առարկայական իրողություններին և, հետևաբար, ապացուցելի չէ: Ավելին, ինքդ քեզ դնելով այդ վիճակում, ստիպված ես լինում ենթարկվել ոճրագործի տրամաբանությանը¹⁹: Այնուամենայնիվ, դա, թվում է, մեզ ամենահարմար կարգավիճակն է, ինչը մոտենում է մագոխականության սահմանին: Վերջինս, իհարկե, դեռևս բացահայտման կարիք ունի, բայց կարելի է ասել, որ դա ո-

¹⁹ Տե՛ս Kazanjian D., Nichanian M., *Between Genocide and Catastrophe, Loss: The Politics of Mourning*. University of California Press, 2003, էջ 133:

րոշակի հանգստություն պատճառելու ունակություն ունի, քանի որ կրավորական սուբյեկտը՝ մագոխականը, հափշտակվում է իր անհուն կրավորականությանը և հրաժարվում է ինքնակայությունից, ինքնիշխանությունից՝ ենթարկվելով ուրիշ սուբյեկտի²⁰: Ակտիվ կողմի դիրքորոշումը կորցնելու, հոսանքին տրվող կրավորականության հաճույքն է մագոխականի կեցվածքը: Սակայն դրանից ծնված անիմաստ տանջանքներն ու մահերը իմաստավորելու, անմեղ զոհի կարգավիճակ հաղորդելու համար առաջադրվում են տարբեր հայեցակարգեր, որոնց մեջ առաջինը մարտիրոսության ուսմունքն է²¹: Սրբադասելով զոհերին՝ աստվածային կամ գերբանական իմաստ ենք փաթաթում նրանց կերպարների վրա և զրկում ենք վերապրողներին ուղղակիորեն մինչև վերջ յուրակերտելու ստեղծված աղետը:

Սակայն զոհի վիճակ ստանձնելը միշտ նույն կերպ չի վերարտադրվում, այլ հանգեցնում է խոր ընկճվածության: Տեղին է հիշել Սելիգմանի անզորության տեսությունը, որի համաձայն՝ յուրացված անզորությունն ինչ-որ պահից սկսած արգելում է մարդուն²² իր փրկության համար գործունեություն ծավալել: «Անզորությունն այն հոգեբանական վիճակն է, որ հաճախ առաջանում է, երբ իրադարձությունները դառնում են անվերահսկելի»²³, այսինքն՝ երբ սուբյեկտը դառնում է խիստ կրավորական: Զոհը սկսում է հուսալքվել և այլևս չի փորձում փրկել ոչինչ՝ պատրաստ լինելով հրաժարվել անգամ կյանքից: Հայկական արմատական՝ «կամ ամեն ինչ, կամ ոչինչ» սկզբունքով առաջնորդվող բնավորության տեսանկյունից դրավառ օրինակն է 1920 թվականին Կարսը չփրկելու և կրավորականորեն միջագային հանրության կողմից Սևրի պայմանագիրը գործի մեջ դնելու հանգամանքը: Մեր օրերում դա դրսևորվում է Սյունիքի հետ կապված իրողություններով և ընդհանրապես համատարած հուսալքությամբ: Սուբյեկտի գիտակցության դիրքերից, որ այնուամենայնիվ երբեմն առկայծում է կրավորական հոգեկանում, կորուստների շարանը նողկանք է առաջացնում սեփական ես-ի նկատմամբ, ինչը մղում է ինքնուրույն «լեզվի» կայացմանը²⁴, որով պիտի ձևակերպվեն երազանքները:

Ռենե Ժիրարի ուսմունքի համաձայն՝ զոհաբերություն կատարելու էներգիան սուբստանցիոնալ է և միշտ գտնում է իր զոհին. եթե ոչ բնական ու անհրաժեշտ, ապա գոնե փոխարինողին²⁵, որը դառնում է «քավության

²⁰ Տե՛ս Ազանթին Ջ., Մնացորդ Աշուիցի. արխիվ եւ վկան, թարգմ. Մարկ Նշանեանի, Եր., «Ակտուալ արվեստ», 2020, էջ 126:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

²² Նախնական հետազոտություններն արվել են կենդանիների վրա, հետո արդյունքները փոխադրվել են մարդկային միջավայր:

²³ Seligman M., Helplessness: On Depression, Development, and Death. San Francisco, 1975, էջ 9:

²⁴ Տե՛ս Крисцева Ю., Силы ужаса: эссе об отворачивании. СПб., «Алетейя», 2003, էջ 40:

²⁵ Տե՛ս Girard R., Violence and the Sacred. Translated by P. Gregory. The John Hopkins University Press, 1989, էջ 2:

նոխազ»։ Այլ կերպ՝ գոհաբերությունը ոչ միայն և ոչ այնքան զուտ առապելաբանական հիմքեր ունի, որքան ընկերաբանական՝ ընկած լինելով մարդու վարքի խորքում։ Նշանակում է՝ եթե գոհաբերությունը տեղի չի ունենում, այդ պահանջը սկսում է ներքին ագրեսիա կուտակել։ Զոհաբերությունը կարևոր դեր է խաղում հասարակական կյանքում, այն «ձառայում է ողջ համայնքի պաշտպանությանը **իր իսկ բռնությունից**»²⁶՝ ազատելով նաև վրեժի ինքնաթունավորող ազդեցությունից։ Այսպես կոչված միջազգային հանրությունը և միջազգային դատարանները ռացիոնալիզացնում են վրեժի գզացողությունը և դրանով իսկ գոհին կախվածության մեջ են դնում իրենցից, ինչի հետևանքով ավելի է սրվում կրավորական անզորությունը։

Ռենե Ժիրարն արդի հասարակությունների բնորոշ գծերից մեկը համարում է **գոհաբերության ճգնաժամը**, որը նշանավորվում է մաքրող և աղտոտող բռնությունների միջև տարբերությունների ջնջմամբ, մարդկանց միջև տարբերությունների անտեսմամբ և ընդհանրապես մշակութային կարգի խաթարմամբ²⁷։ Զոհաբերության բացակայության դեպքում գլուխ է բարձրացնում ինքնազոհաբերման մղումը, որը, սակայն, եթե չի նկատվում ու չի ուղղորդվում, մնում է լոկ որպես կորուստ։

4. Հիշողություն և հետհիշողություն

Ինքնազոհաբերումը հղի է վերածնվելու լիցքով, հոգեվերանորոգվելու կամքով, բայց եթե դա սուկ մագոխականության հետևանք է լինում, ապա մնում է միայն ոչ մի տեղ չտանող բռնությունը։ Ինքնաբուխ կերպով ի հայտ եկող այդ հոգեկան ընթացքը ուղղորդման կարիք ունի, հակառակ դեպքում ընդամենը կխորացնի մագոխականության հակումները։ Ընդ որում, դրա ուղղորդումը ենթադրում է իրենից վեր, դուրս հայացք, այլ ոչ թե խոնարհ հպատակեցում։ Թերևս դա վերաբերում է ընդհանրապես հասարակական իրողությունների կառավարմանը։ Ինչպես Շպենգլերն է ասում, «ով իսկապես իրեն ամբոխի ներկայացուցիչ է զգում, այլ ոչ թե նրա խնամակալ, ով չգիտի՝ ինչ է ուզում, նա մի օր էլ չի մնա իշխանության»²⁸, կամ էլ կդիմանա լոկ հասարակության մագոխական անզորացման պատճառով։

Ինքնազոհաբերման պահի հասկացման, զոհի վիճակի փոխակերպման և այդ ամենի պատմականացման ուղին հիշողությունն է։ Վերջինս կրավորականությունից դուրս բերող հատկություն է, քանի որ կա անկախ սուր-

²⁶ Նույն տեղում, էջ 8։

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 49։

²⁸ Spengler O., նշվ. աշխ., էջ 560 ծնթ.։

յեկտի կամքից և իրենով ներկայացնում է որոշակի իրականություն: Հիշողության և հետհիշողության (նկատի ունենք սերունդների միջև ջրբաժանով միջնորդավորված հիշողությունը, որը դեռևս պատմություն չէ)²⁹ միասնությունն է ապահովելու հավաքականություն ծնելու ներունակություն ունեցող տրավմայի փրկությունը արտամղումից ու մոռացումից և դառնալու է հանգրվան՝ հավաքական հիշողության դիրքերից ներկայից անցյալ պատմականացման հոլովույթը կայացնելու համար: Հասարակությունը, որ հակված է ուրանալ, մերժել իր անցյալի որևէ դրվագ, այլևս հիշողությունը չի ընկալում իբրև աղոթք՝ հավատալով սոսկ անկենդան արխիվներին: Հիշողությունը այն հումքն է, որը մի կողմից չի թողնելու, որ հոգեկան վնասվածքները անգիտակցորեն վերածվեն բարդույթի ու արատավորեն կյանքը, մյուս կողմից վերածնելու է հաղթական կերպարը, որ ձեռք էր բերվել մեծ ջանքերով: Հիշողությունը պատմականացման, պատմության լինելիության ճանապարհն է, ուստի դրա հետ աշխատանքն է պատմությունը դարձնելու հնարավորինս անընդհատական, ամբողջական ու կենդանի:

Դավիթ Ռ. Մոսինյան – գիտական հետազոտությունների բնագավառներն են՝ պատմության փիլիսոփայություն, մշակույթի փիլիսոփայություն, գիտության մեթոդաբանություն, կինոյի նշանագիտություն:

Summary

PERSPECTIVES OF THE HISTORIFICATION OF WAR

And ways to overcome the victim complex

Davit R. Mosinyan

Candidate of Sciences in Philosophy

Key words – war, geopolitics, myth, historification, victim complex, helplessness, masochism, collective memory, post-memory.

The wars turn from local to more comprehensive regional, gaining a broad geopolitical character. The wars on the border do not only concern the neighboring countries, but also necessarily involve certain political units, or, on the contrary, some interests of the political superpowers give rise to private wars. Therefore, taking care of one's own war presupposes references to civilized dimensions. The

²⁹ **Steu Hirsch M.**, Family Pictures: Maus, Mourning, and Post-Memory // Discourse, Vol. 15, No 2, Special Issue: The Emotions, Gender, and the Politics of Subjectivity (Winter 1992-93), էջ 8-9:

appropriation of war, that is to say, the maintenance of sovereignty in geopolitical relations, among other factors, requires the historification of war. The historification of war means to get rid of the myths that compel certain behaviors related to it and to think of that in the course of time, bringing together the personal, military, cultural, geopolitical levels in the perspective of the future. The post-war period is in danger of remaining like that, of not turning into peace, as long as there is no initiative to make it an internal phenomenon.

Резюме

ПЕРСПЕКТИВЫ ИСТОРИФИКАЦИИ ВОЙНЫ

И пути преодоления комплекса жертвы

Давид Р. Мосинян

Канд. философских наук

Ключевые слова – война, геополитика, миф, исторификация, комплекс жертвы, беспомощность, мазохизм, коллективная память, пост-память.

Войны превращаются из локальных в более масштабные региональные, приобретая широкий геополитический характер. Войны на границе не только касаются соседних стран, но и обязательно вовлекают определенные политические единицы, или, наоборот, некоторые интересы сверхдержав порождают частные войны. Следовательно, забота о собственной войне предполагает обращение к цивилизационным измерениям.

Осмысление войны, то есть поддержание суверенитета в геополитических отношениях, среди других факторов, требует исторификации войны. Исторификация войны означает избавление от мифов, которые побуждают к определенному поведению. Исторификация войны означает думать об этом в самом течении времени, сводя воедино личный, военный, культурный и геополитический уровни в перспективе будущего. Послевоенный период рискует остаться таким, не превратиться в мир, пока не будет инициативы сделать его внутренним переживанием.

REFERENCES

1. **Agambēn J.**, Homo Sacer: Gerishkhan tirakalut'iwne ew merk keank'ē, t'argmn. Mark Nshaneani, Er., "Ink'nagir" grakan akumb, 2020 (**In Armenian**).
2. **Agambēn J., Mnats'ordk'** Awshuits'i, arkhivē ew vkan, t'argmn. Mark Nshaneani, Er., Aktual arvest, 2020 (**In Armenian**).
3. **Bayadyan H.**, Erevakayelov ants'yalē. Khorhrdayin ardiakanut'yan patumner, Er., Heghinakayin hrat., 2020 (**In Armenian**).
4. **Bek U.**, Zhivja v mirovom obsh'estve riska i schitajas' nim. Kosmopoliticheskij povorot, Polis, "Politicheskie issledovaniya", N 5 (131), 2012 (**In Russian**).
5. **Koloso V. A., Zotova M. V.**, Geopoliticheskoe videnie mira rossijskimi grazhdanami: pochemu Rossija ne Evropa? // Polis, "Politicheskie issledovaniya", N 5 (131), 2012 (**In Russian**).
6. **Kristeva Ju.**, Sily uzhasa: essje ob otrash'enii, S. Pb., "Aletejja", 2003 (**In Russian**).
7. **Mkrtich'yan A.**, "Och' paterazm, och' khaghaghut'yun" hayets'akargē orpes hetkhorhrdayin hay hasarakakan kyank'i sots'iologiakan akhtoroshman model, Hayastan, 2018. iroggut'yunner ev herankarner: Ink'nut'yun 3 (1), Er., Humanitar hetazotut'yunneri haykakan kentron, 2019 (**In Armenian**).
8. **Nzhdeh G.**, Hatēntir, Er., "Amaras", 2006, (**In Armenian**).
9. **T'umanyan H.**, Hayots' patmut'yun, "Erkeri liakatar zhoghovatsu", hat. 6, Er., 1994 (**In Armenian**).
10. **Urdan R., Vit'k'in B.**, Hayastan. Lernayin Gharabaghi ankumē, Aktual arvest, N 8 (14), 2021 (**In Armenian**).
11. **Xausxofer K.**, O geopolitike, M., "Mysl'", 2001 (**In Russian**).